

Ինչպես օգտվել վարքի կիրառական վերլուծության (ՎԿՎ/ABA) թերապիայից

Ապրիլ 2021թ., Հրատ. #7167.10 Armenian

- I. [Ի՞նչ է ՎԿՎ թերապիան](#)
- II. [ՎԿՎ թերապիայի ստացումը առողջության ապահովագրության պլանի միջոցով](#)
- III. [ՎԿՎ թերապիան հանրային դպրոցներում](#)
- IV. [ՎԿՎ թերապիայի ստացումը տարածքային կենտրոնի միջոցով](#)

Ի՞նչ է ՎԿՎ թերապիան

Վարքի կիրառական վերլուծությունը փաստերի վրա հիմնված թերապիա է: ՎԿՎ թերապիան կանխարգելում կամ նվազեցնում է ուսմանը և սոցիալական շփմանը խանգարող վարքի վատ ազդեցությունները:

ՎԿՎ թերապիայի նպատակներ կարող են լինել.

- նոր վարքագծերի զարգացումը,
- առկա վարքագծերի ամրապնդումը կամ թուլացումը,
- հատուկ միջավայրերի արդյունքում ձևավորված վարքագծերի վեր հանումը,

- մանր մոտորիկայի հմտության, հիգիենայի, անձնական խնամքի, տնային գործերի հմտությունների, կարգապահության և աշխատանքային կարողությունների բարելավումը,
- լեզվական և հաղորդակցման հմտությունների կատարելագործումը և
- ուշադրության, կենտրոնացման, սոցիալական հմտությունների, հիշողության և կրթական առաջադիմության բարելավումը:

ՎԿՎ թերապիան կարող է հարմարեցվել՝ տարբեր կարիքները բավարարելու համար: Առևտրի գնումները երեխաների հետ աշխատելու համար որակավորված ծառայություններ մատուցողը կարող է յուրաքանչյուր անձի համար մշակել փոփոխությունները, իրականացնել և գնահատել դրանք: ՎԿՎ թերապիան ներառում է գնահատում, բուժում և մշտադիտարկում: Վարքագիծը դրական ուղղությամբ և նպատակուղղված կերպով փոխելու համար վերապատրաստված ծառայության մատակարարներն օգտագործում են դրական վարքագծի ամրապնդման ռազմավարություններ և անցյալ-վարք-հետևանքներ աղյուսակը:

Առևտրի գնումները երեխաների հետ աշխատելու համար որակավորված ծառայություններ մատուցողը վերահսկում է կամ անմիջականորեն ինքն է իրականացնում ՎԿՎ թերապիան: Այս անձը սովորաբար մասնագիտական հավաստագիր ունեցող վարքի վերլուծաբան (BCBA) է լինում: Ծրագրում կարող են ընդգրկվել նաև բժիշկներ կամ վարքի շտկման ուղղությամբ աշխատող գրանցված հոգեբույժներ (RBT): Այս մասնագետներն անցնում են վերապատրաստում կամ վերահսկվում են BCBA-ի կամ վարքի կառավարման խորհրդատուի կողմից: Երբեմն ՎԿՎ թերապիայի ծառայությունները կարող է մատուցել մեկ այլ լիցենզավորված անձ՝ որպես առևտրի գնում հիվանդ երեխաների հետ աշխատելու համար որակավորված ծառայություններ մատուցող: Այդպիսի մասնագետներ են՝

- բժիշկը
- վիրաբույժը
- ֆիզիոթերապևտը
- մասնագիտական հիվանդությունների բժիշկը
- հոգեբանը
- զույգերի և ընտանեկան հոգեբանը
- կրթական միջավայրում աշխատող հոգեբանը
- կլինիկական սոցիալական աշխատողը

- պրոֆեսիոնալ կլինիկական խորհրդատուն
- լոգոպեդ-հոգեբանը
- ականջաբանը

Սակայն մատուցվող ծառայությունները պետք է համընկնեն լիցենզավորված անձի փորձին և կարողություններին:¹

ՎԿՎ թերապիան կարող է իրականացվել տարբեր վայրերում՝ տանը, դպրոցում և համայնքում: Բուժման սեսիաների շաբաթական ժամերի քանակը և անցկացման ժամերը կարող են տարբեր լինել: Մարդիկ սովորաբար համակարգում և ստանում են ՎԿՎ թերապիան դպրոցական կրթության շրջանային բաժնի, առողջության ապահովագրության կամ տարածքային կենտրոնի միջոցով:

Կան ՎԿՎ թերապիայի ծառայություններն ստանալու և դրանց ֆինանսավորման տարբեր եղանակներ: ՎԿՎ թերապիայի ծառայությունների ստացումը և ֆինանսավորումը կարող է դժվար լինել: Իրավունակ երեխաների համար ֆինանսավորում հիմնականում հատկացնում են ապահովագրությունը, դպրոցական կրթության շրջանային բաժինը կամ տարածքային կենտրոնները: Առողջության ապահովագրության պլանի, դպրոցական կրթության շրջանային բաժնի կամ տարածքային կենտրոնի միջոցով ՎԿՎ թերապիա ստանալու համար պետք է իմանաք ձեր առողջության ապահովագրության տեսակը:

ՎԿՎ թերապիայի ստացումը առողջության ապահովագրության պլանի միջոցով

ՎԿՎ թերապիան մտնում է առողջության ապահովագրական շատ պլանների ծածկույթի մեջ: Այս բաժնում ներկայացված է, թե ինչպես կարելի է ծառայությունները և դրանց ֆինանսավորումը ստանալ ապահովագրության միջոցով: Դրանք Medi-Cal ապահովագրական պլաններն են, Covered California-ի միջոցով գնված ապահովագրական պլանները, մասնավոր ապահովագրական ընկերությունից գնված անհատական ապահովագրական պլանները և գործատուի կողմից տրամադրվող առողջության ապահովագրության պլանները:

ՎԿՎ թերապիայի ստացումը Medi-Cal-ի միջոցով

Արդյո՞ք ՎԿՎ թերապիան մտնում է Medi-Cal-ի ծածկույթի մեջ

Այո, մինչև 21 տարեկան անդամների համար:² Medicaid-ի՝ Վաղ և պարբերաբար սկանավորման, ախտորոշման և բուժման (Early and Periodic Screening, Diagnostic, and Treatment, EPSDT) ապահովագրական նպաստի շրջանակում³ Medi-Cal-ը իրավունակ շահառուների համար վճարում է Վարքագծի շտկման ուղղությամբ տարվող բուժման (Behavioral Health Treatment, BHT) բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բոլոր ծառայությունների դիմաց:⁴ Վարքագծի շտկման ուղղությամբ տարվող բուժումը Medi-Cal-ի ծառայությունների կատեգորիա է, որի մեջ մտնում է ՎԿՎ թերապիան:⁵ Բժիշկը կամ հոգեբանը պետք է առաջարկեն ՎԿՎ թերապիան որպես բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժում: Բժշկական անհրաժեշտությունը որոշվում է՝ ելնելով այն բանից, թե արդյոք ծառայությունները կշտկեն կամ կմեղմեն ֆիզիկական և (կամ) հոգեկան առողջության խնդիրները:⁶ ՎԿՎ թերապիայի ծառայությունների համար Medi-Cal-ը չի պահանջում աուտոիզմի ախտորոշում:⁷ Medi-Cal-ի ծածկույթով փոխհատուցվում են արդեն մատուցված և վճարված ՎԿՎ ծառայությունները և Medi-Cal-ի կառավարվող բուժսպասարկումը:⁸

Վճարովի Medi-Cal ունեցող երեխաները ՎԿՎ թերապիայի ծառայությունները կստանան իրենց տարածքային կենտրոնից:⁹ Եթե ունեք վճարովի Medi-Cal և ցանկանում եք տեղեկանալ ՎԿՎ թերապիայի հնարավորությանը, ծառայությունների և ֆինանսավորման վերաբերյալ հարցերը քննարկելու համար կապվեք ձեր տարածքային կենտրոնի հետ: Եթե ունեք վճարովի Medi-Cal, սակայն չեք հանդիսանում տարածքային կենտրոնի շահառու, իրավունակությունը որոշելու համար կապվեք որևէ տարածքային կենտրոնի հետ: Եթե ունեք կառավարվող բուժսպասարկման պլան, կապվեք ձեր պլանի սպասարկման գրասենյակի հետ և տեղեկացեք ՎԿՎ թերապիայի ծառայություններին: Կարող եք միանգամից դիմել նաև ձեր առաջնային բուժսպասարկողին (օր.՝ ձեր մանկաբույժին) և տեղեկանալ ՎԿՎ թերապիայի ծառայություններին:

Medi-Cal-ի դեպքում որո՞նք են ՎԿՎ թերապիայի ծառայությունների համապատասխանության չափանիշները

- Լինել 21 տարեկանից փոքր
- Ունենալ լիցենզավորված բժշկի, վիրաբույժի կամ հոգեբանի առաջարկությունը այն մասին, որ վարքի փաստերի վրա հիմնված շտկման ուղղությամբ տարվող բուժման ծառայությունները բժշկական տեսանկյունից անհրաժեշտ են
- Ունենալ բժշկական տեսանկյունից կայուն վիճակ
- Չունենալ 24-ժամյա բժշկական/բուժքույրական հսկողության կամ հիվանդանոցում կամ մտավոր հետամնացությամբ անձանց համար նախատեսված ամենօրյա խնամքի կենտրոնում (ICF/ID) կատարվող բուժգործողությունների կարիք:¹⁰

Ո՞վ է պատասխանատու ՎԿՎ թերապիայի ծառայությունների համար, եթե երեխան ունի մասնավոր ապահովագրություն և Medi-Cal

Երբեմն երեխան ունենում է երկու ծածկույթ: Երկու ծածկույթի դեպքում երեխան կարող է ունենալ Medi-Cal և առողջության ապահովագրության մեկ այլ ծածկույթ: Առողջության ապահովագրության այս լրացուցիչ ծածկույթը կարող է ներառել անհատական կամ խմբային մասնավոր պլաններ: Եթե երեխան երկու ծածկույթ ունի, ՎԿՎ թերապիայի ծառայությունները և ֆինանսավորումը կստանա իր մասնավոր ապահովագրությունից:¹¹ Medi-Cal-ը կրնա գրկի այն ծառայությունները, որոնք չեն փոխհատուցվի մասնավոր ապահովագրության ծածկույթով:¹² Օրինակ՝ Medi-Cal-ը կարող էք օգտագործել որպես ձեր մասնավոր ապահովագրությանն ուղեկցող ծառայություն, որպեսզի վճարեք համավճարները և (կամ) ապահովագրության պատասխանատվության սահմանների հետ կապված համատեղ ապահովագրության վճարները: Եթե ունեք մասնավոր ապահովագրություն և վճարովի Medi-Cal, ապա համավճարների հետ կապված օգնություն ստանալու համար ձեր ՎԿՎ թերապիայի ծառայություն մատուցողը պետք է լինի վճարովի Medi-Cal-ի բուժսպասարկող: Եթե ձեր ՎԿՎ թերապիայի ծառայություն մատուցողը վճարովի Medi-Cal-ի բուժսպասարկող չէ, համավճարի օգնություն ստանալու համար կապվեք տարածքային կենտրոնի հետ:

Ի՞նչ իրավունքներ ունեմ, եթե համաձայն չեմ իմ ծառայությունների մերժման կամ փոփոխման հետ

Եթե ունեք վճարովի Medi-Cal, կարող եք նահանգային լսումներ պահանջել:

Եթե ունեք կառավարվող բուժապասարկման պլան, կարող եք նահանգային լսումներ պահանջել, եթե.

- կատարել եք ձեր կառավարվող բուժապասարկման պլանով սահմանված բողոքարկման ներքին գործընթացը և ստացել եք նամակ, որում ասվում է, որ ձեր առողջության ապահովագրության պլանը չի տրամադրի ծառայությունը, կամ
- չեք ստացել որոշման մասին որևէ նամակ, և անցել է ավելի քան 30 օր:¹³

Ձեր կառավարվող բուժապասարկման պլանով նախատեսվող բողոքարկման ներքին գործընթացին մանրամասն կարող եք ծանոթանալ՝ կապվելով անդամների սպասարկման կենտրոնի հետ: Անցնելով ներքևի հղմամբ՝ կտեսնեք Medi-Cal-ի կառավարվող բուժապասարկման բոլոր պլանների կոնտակտային տվյալների ցանկը: <https://www.dhcs.ca.gov/individuals/Pages/MMCDHealthPlanDir.aspx>:

Ինչպես պահանջել նահանգային լսումներ

Նահանգային լսումների անցկացման դիմում կարող եք ներկայացնել ձեր մերժման նամակի ամսաթվին հաջորդող 90 օրվա ընթացքում:¹⁴ Նահանգային լսումներ պահանջելու համար կարող եք լրացնել նահանգային լսումների դիմումի ձևը («State Hearing Request»), որը կգտնեք հետևյալ հղմամբ՝ www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/Medi-CalFairHearing.aspx և ուղարկել այն հետևյալ հասցեով.

California Department of Social Services
State Hearings Division
P.O. Box 944243, MS 19-37
Sacramento, CA 94244-2430

Կարող եք նաև զանգահարել և խնդրել նահանգային լսումներ անցկացնել: Հեռախոսահամարը կարող է զբաղված լինել: Հնարավոր է՝ ձեզ ուղարկվի հաղորդագրություն հետ զանգելու խնդրանքով:

Անվճար հեռախոսահամար՝ 1-800-952-5253
Հեռատիպ՝ 1-800-952-8349

Կարող եք նաև նահանգային լսումների դիմումներ կայացնել առցանց՝
<https://acms.dss.ca.gov/acms/page.request.do?page=public.intakeForm>:

Կարո՞ղ եմ ստանալ բուժում, եթե նահանգային լսումների իմ դիմումը
դեռևս ընթացքի մեջ է

Այո, եթե ծանուցմամբ դադարեցվում կամ կրճատվում են
ծառայությունները: «Aid Paid Pending»-ի իրավունակությունը
պահանջում է.

- Նահանգային լսումների դիմումներ կայացնել 10 օրվա ընթացքում՝
 - սկսած ծանուցման փոստային դրոշմակնիքի ամսաթվից,
 - սկսած ծանուցումը ձեզ հանձնելու օրվանից կամ
 - մինչև այն ամսաթիվը, որի դրությամբ ծանուցմամբ ասվում
է, որ ձեր բուժումը կդադարեցվի կամ կփոխվի:
- Ասել, որ ցանկանում եք շարունակել բուժումը լսումների
գործընթացի ժամանակ:

Ձեր գործով լսումներն անցկացնելու և որոշումը ձեզ ուղարկելու համար
կարող է մինչև 90 օր պահանջվել:

ՎԿՎ թերապիայի ստացումը առողջության մասնավոր ապահովագրության միջոցով

Կարո՞ղ եմ ստանալ ՎԿՎ թերապիա Covered California-ի միջոցով գնված պլանի օգնությամբ

Այո: 2010թ. ընդունված Մատչելի բուժօգնության մասին օրենքը
(Affordable Care Act, ACA) պահանջում է, որ Covered California-ի
միջոցով վաճառված առողջության ապահովագրության պլանները
ներառեն առողջության ապահովման պարտադիր նպաստների
փաթեթ:¹⁵ Առողջության ապահովման այս պարտադիր նպաստները
կարող են ներառել ՎԿՎ թերապիան:¹⁶ ACA օրենքով ձեր
ապահովագրական պլանով նախատեսվող հոգեկան առողջության
բուժման ծառայությունները պետք է նման լինեն այն
ծառայություններին, որոնք առաջարկվում են ձեր պլանով որպես

համեմատելի բժշկական ծառայություններ: Covered California-ի բոլոր ապահովագրական պլանները իրենց ծածկույթում իրավունակ անձանց համար պետք է ներառեն ՎԿՎ թերապիան:

Կարո՞ղ եմ ստանալ ՎԿՎ թերապիան անհատական ապահովագրական պլանի միջոցով, որը գնվել է միանգամից առողջության ապահովագրության մասնավոր ընկերությունից

Այո, եթե ձեր երեխան ունի աուտիզմ, կամ նրա մոտ ախտորոշվել է զարգացման այլ ընդհանուր խանգարում: Մասնավոր ապահովագրական պլանները կարգավորվում են նահանգային օրենսդրությամբ: 2012թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած SB 946 օրենքով հիմնականում պահանջվում է, որ առողջապահական պլանների պայմանագրերով և առողջության ապահովագրության վկայագրերով տրամադրվի ծածկույթ հոգեկան առողջության բժշկական տեսանկյունից անհրաժեշտ բուժման համար: Դա ներառում է ՎԿՎ թերապիան աուտիզմով կամ զարգացման այլ ընդհանուր խանգարումներով անձանց համար: SB 946 օրենքը կիրառելի է առողջապահական բոլոր պլանների համար, որոնք տրամադրում են հիվանդանոցային, բժշկական կամ վիրաբուժական բուժում Կառավարվող բուժսպասարկման դեպարտամենտի (Department of Managed Health Care, DMHC) կամ Ապահովագրության դեպարտամենտի (Department of Insurance DI) իրավասության ներքո:¹⁷ Եթե ձեր երեխան աուտիզմով չի տառապում, կամ նրա մոտ չի ախտորոշվել զարգացման այլ ընդհանուր խանգարում, ձեր ապահովագրությունը հնարավոր է փոխհատուցի ՎԿՎ թերապիան: Կապվեք ձեր առողջության ապահովագրական պլանի անդամների սպասարկման կենտրոնի հետ՝ տեսնելու, թե արդյոք ձեր պլանի ծածկույթը ներառում է նաև ՎԿՎ թերապիան աուտիզմով կամ զարգացման այլ ընդհանուր խանգարումների ախտորոշում չունեցող անձանց համար:

Կարո՞ղ եմ ստանալ ՎԿՎ թերապիան գործատուի կողմից ինձ տրամադրված առողջության ապահովագրության միջոցով

Նահանգի օրենսդրությունը կարգավորում է գործատուի կողմից ֆինանսավորվող առողջության ապահովագրության պլանները, որոնք տրամադրում են ամբողջական ապահովագրություն/ամբողջական վճարված են: Օրենքը, որով կարգավորվում են գործատուի կողմից ֆինանսավորվող ամբողջական ապահովագրություն

տրամադրող/ամբողջական վճարված պլանները, SB 946-ն է: SB 946 օրենքով պահանջվում է, որ առողջապահական պլանների պայմանագրերը և առողջության ապահովագրության վկայագրերը տրամադրեն ծածկույթ, ինչպես նշված է վերևում: SB 946 օրենքը կիրառելի է առողջապահական բոլոր պլանների համար, որոնք տրամադրում են հիվանդանոցային, բժշկական կամ վիրաբուժական բուժում Կառավարվող բուժսպասարկման դեպարտամենտի (Department of Managed Health Care, DMHC) կամ Ապահովագրության դեպարտամենտի (Department of Insurance DI) իրավասության ներքո: Հակառակ դեպքում, եթե պլանը ինքնուրույն ապահովագրություն է/ձեռք է բերվել ինքնուրույն վճարմամբ, այդպիսի պլանը կարգավորվում է դաշնային օրենսդրությամբ: Եթե բոլոր ինքնուրույն ապահովագրված/ինքնուրույն վճարմամբ ձեռք բերված պլանները պետք է համապատասխանեն դաշնային օրենքների պահանջներին, ապա գործատուն ինքն է մշակում ապահովագրական պլանով տրամադրվող նպաստի սխեման: Որոշ պլաններ ծածկույթում կներառեն ՎԿՎ թերապիան, մյուսները՝ ոչ: Կապվեք ձեր առողջության ապահովագրության պլանի անդամների սպասարկման կենտրոնի կամ ձեր գործատուի մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի հետ, որպեսզի պարզեք, թե արդյոք ձեր պլանը ինքնուրույն ապահովագրություն է/ինքնուրույն վճարմամբ ձեռք բերված, և արդյոք ՎԿՎ թերապիան մտնում է ծածկույթի մեջ: Եթե ձեր ապահովագրական պլանի ծածկույթը չի ներառում ՎԿՎ թերապիայի ծառայությունները, պահանջեք ծածկույթի մասին նամակ և դիմեք տարածքային կենտրոնին:¹⁸ Տարածքային կենտրոնը միզուցե ֆինանսավորի ՎԿՎ թերապիան, եթե ունեք առողջության ապահովագրության ինքնուրույն ապահովագրությամբ/ինքնուրույն վճարմամբ ձեռք բերված պլան, որի ծածկույթի չի ներառում այս ծառայությունները: Կարող եք նաև ձեր գործատուին խնդրել իր պլանի ծածկույթում ներառել այս ծառայությունները:

Ո՞ւմ կարող եմ դիմել, եթե իմ առողջության ապահովագրության մասնավոր ընկերությունը մերժի իմ պահանջը կամ դիմումը

Առողջության ապահովագրության մասնավոր ընկերությունը ձեր պահանջին պետք է ընթացք տա կամ պատասխանի ձեր գրավոր դիմումին 30 օրվա ընթացքում:¹⁹ Մերժում ստանալու կամ ծառայությունների դադարեցման դեպքում կարող եք բողոքարկել անմիջապես ձեր ապահովագրական ընկերության անդամների սպասարկման բաժնի միջոցով: Կոնտակտային տվյալները կարող եք

գտնել ձեր ապահովագրական քարտի վրա կամ նպաստների ձեռնարկում: Երբ զանգահարեք, ինդրեք ձեզ միացնեն այն աշխատակցի հետ, որի հետ կարող եք խոսել առևտիզմին առնչվող կամ վարքի շտկմանն ուղղված ծառայությունների բողոքի վերաբերյալ: Ձեր ապահովագրական ընկերությունը միգուցե պահանջի բողոքը գրավոր ներկայացնել: Այլ ընկերությունները միգուցե բողոքարկման առցանց գործընթաց ունենան: Անկախ դրանից ձեր ապահովագրական ընկերությունը պետք է պատասխանի ձեր բողոքին 30 օրվա ընթացքում:²⁰

Ձեր դիմումը մերժելու դեպքում ապահովագրական ընկերությունը պետք է նշի մերժման պատճառը: Նրանք ձեզ պետք է տրամադրեն նաև բոլոր անչվող փաստաթղթերը: Եթե այդ փաստաթղթերը դեռևս չունեք, պահանջեք դրանք: Բողոքարկելիս ներկայացրեք ձեր երեխայի մանկաբույժից, դպրոցական կրթության շրջանային բաժնից կամ տարածքային կենտրոնից ստացած բոլոր նախկին գնահատումները, բուժման պլանները, նպատակները և նամակները: Այս բոլոր փաստաթղթերը օգնելու են հիմնավորել ՎԿՎ թերապիայի բժշկական անհրաժեշտությունը: Մինչ բողոքարկման գործընթացի ավարտը պահեք այս բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները:²¹

Այս ռեսուրսները տրամադրում են լրացուցիչ տեղեկություններ մասնավոր ապահովագրության բողոքարկման գործընթացի և SB 946 օրենքի մասին.

- [Սեղմեք այստեղ](#) առողջության ապահովագրության մասնավոր ընկերությունների մերժումների բողոքարկման վերաբերյալ DRC-ի հրապարակումը տեսնելու համար:
- [Սեղմեք այստեղ](#) SB 946 օրենքի վերաբերյալ DRC-ի հրապարակումը տեսնելու համար:
- [Սեղմեք այստեղ](#) Կառավարվող բուժսպասարկման ծառայությունների դեպարտամենտի (Department of Managed Health Care Services, DMHC) բոլոր պլանների ցանկը տեսնելու համար:
- [Սեղմեք այստեղ](#) Ապահովագրության դեպարտամենտի (Department of Insurance, DI) բոլոր պլանների ցանկը տեսնելու համար:

ՎԿՎ թերապիան հանրային դպրոցներում

Ձեր երեխան կարող է ՎԿՎ թերապիայի ծառայություններն ստանալ իր առողջության ապահովագրության պլանի միջոցով: Սակայն եթե ձեր երեխային անհրաժեշտ է ՎԿՎ թերապիան հատուկ կրթություն ստանալու նպատակով, հնարավոր է ստանալ կրթությանն առնչվող ՎԿՎ թերապիա ձեր երեխայի դպրոցական կրթության շրջանային բաժնի միջոցով: Գործում են դպրոցական կրթության շրջանային բաժնի միջոցով ՎԿՎ թերապիան ստանալու և դրա ֆինանսավորման սահմանափակումներ: Այս բաժնում ներկայացվում են հատուկ կրթության ծրագրերի մասին դաշնային օրենքները, ինչպես պահանջել Անհատականացված կրթական ծրագիր ձեր երեխայի համար, և որ իրավիճակներում դպրոցական կրթության շրջանային բաժինը կֆինանսավորի ՎԿՎ թերապիան: Կալիֆորնիայում հատուկ կրթության ծրագրերը ղեկավարվում են Հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքով:

Որո՞նք են Հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքի և FAPE ստանդարտները

Կալիֆորնիայում հատուկ կրթության ծրագրերը ղեկավարվում են դաշնային ու նահանգային օրենքներով: Այդ օրենքներն են Հաշմանդամություն ունեցող անձանց մասին օրենքը (Individuals with Disabilities Act, IDEA) և Կալիֆորնիայի կրթության մասին օրենքը: IDEA-ն սահմանում է կանոններ հատուկ կրթության ծրագրի ստանդարտների համար:

Հատուկ կրթության իրավունակություն ունեցող աշակերտներն ունեն անվճար համապատասխան հանրային կրթություն (FAPE) ստանալու իրավունք:²² «Անվճար» նշանակում է, որ հանրային դպրոցն է վճարում հատուկ կրթության և հարակից ծառայությունների համար, այլ ոչ ընտանիքը: «Համապատասխան» նշանակում է, որ հատուկ կրթությունը համապատասխանում է աշակերտի առանձնահատուկ կարիքներին: Եվ հատուկ կրթությունը աշակերտին տալիս է կրթական օգուտ: Այսինքն, եթե աշակերտին անհրաժեշտ է ՎԿՎ թերապիան, որպեսզի օգուտ ստանա դպրոցից, ուրեմն, դպրոցական կրթության շրջանային բաժինը պետք է վճարի ՎԿՎ թերապիայի համար որպես հարակից ծառայություն:²³ Իսկ FAPE-ն պահանջում է, որ ծառայությունները համապատասխանեն նախադպրոցականից միջնակարգ կրթության (3-

ից 21 տարեկան) համապատասխան ստանդարտներին և հետևեն Անհատականացված կրթական ծրագրին (IEP):²⁴

Ի՞նչ է Անհատականացված կրթական ծրագիրը (IEP), և ինչպես պահանջեմ այն երեխայիս համար

Անհատականացված կրթական ծրագիրը (IEP) գրավոր պլան է, որը մշակում եք դուք և ձեր աշակերտի IEP-ի թիմը, երբ ձեր երեխան ձեռք է բերում հատուկ կրթության իրավունակություն: IEP-ի թիմը փոփոխում է IEP-ը առնվազն ամեն տարի: IEP-ում նկարագրվում են ձեր երեխայի առաջադիմության ներկայիս մակարդակը, ուսումնական նպատակները, ծառայությունները, անհրաժեշտ օժանդակ սարքավորումները, շենքային ձևափոխությունները և ընդունելությունը դպրոցում:²⁵

Որպես IEP ստանալու առաջին քայլ պետք է դիմել դպրոցական կրթության շրջանային բաժնին, որպեսզի վերջինս իրականացնի ձեր երեխայի գնահատումը հատուկ կրթության համար: Դուք կամ ձեր աշակերտի դպրոցի անձնակազմից որևէ մեկը կարող եք ցանկացած պահի ներկայացնել ձեր աշակերտին գնահատման: Եթե ցանկանաք ձեր աշակերտին ներկայացնել հատուկ կրթության համար, գրավոր և թվագրված դիմում ուղարկեք ձեր աշակերտի դպրոցի տնօրենին:²⁶

Դպրոցը հատուկ կրթության գրավոր դիմումն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում պետք է ձեզ գնահատման պլան ուղարկի: Հինգ օրից երկար տևող դպրոցական արձակուրդի ժամանակ (օր.՝ ձմեռային կամ ամառային արձակուրդները) այս ժամկետն ընդմիջվում է:

Դպրոցական կրթության շրջանային բաժինը չի կարող գնահատել ձեր երեխային, քանի դեռ չի ստացել գնահատման համար ձեր գրավոր համաձայնությունը: Հավաստիացեք, որ դպրոցը պլանավորում է գնահատել ձեր երեխային կասկածվող հաշմանդամության բոլոր ոլորտներում: Պլանի վրա կարող եք գրել, որ ցանկանում եք իմանալ, թե արդյոք ձեր աշակերտն ունի դպրոցում ՎԿՎ թերապիա ստանալու կարիք: Այնուհետև, ստորագրեք գնահատման պլանի համաձայնությունը, ըստ անհրաժեշտության պահանջեք լրացուցիչ գնահատումներ և ստորագրված պլանն անմիջապես վերադարձրեք դպրոցին:

Երբ դպրոցական կրթության շրջանային բաժինն ստանա ձեր գրավոր համաձայնությունը գնահատման մասին, այն պետք է 60 օրացուցային օրվա ընթացքում անցկացնի IEP-ի քննարկում ձեր աշակերտի հատուկ

կրթության իրավունակության վերաբերյալ:²⁷ Եվ եթե որոշվի, որ ձեր աշակերտն իրավունակ է հատուկ կրթություն ստանալու համար, IEP-ի թիմը նույն ժամկետի մեջ պետք է մշակի նաև աշակերտի IEP-ը: Այս դեպքում նույնպես նշված ժամկետը կըմբիջվի հինգ օրից երկար տևող դպրոցական արձակուրդների ընթացքում: Դպրոցական կրթության շրջանային բաժինը պետք է քննարկի ձեր աշակերտի կարիքները, մշակի այդ կարիքների բավարարման հատուկ նպատակները և սահմանի, թե ձեր աշակերտին ինչ հարակից ծառայություններ և հարմարություններ են անհրաժեշտ այդ նպատակների իրագործման ուղղությամբ առաջընթաց ունենալու համար:

IEP-ի թիմը կարող է համաձայնել, որ հատուկ կրթությունից օգուտ ստանալու համար ձեր աշակերտն ունի դպրոցում ՎԿՎ թերապիայի ծառայություններ ստանալու կարիք: Այդ դեպքում ձեր երեխայի IEP-ում ՎԿՎ թերապիան կներառվի որպես «հարակից ծառայություն»:
Հարակից ծառայությունը այն ծառայությունն է, որն անհրաժեշտ է՝ օգնելու աշակերտին օգուտ ստանալ իր հատուկ կրթության ծրագրից:²⁸ «Օգուտ ստանալ հատուկ կրթությունից» հիմնականում նշանակում է ողջամիտ առաջընթաց IEP-ով սահմանված նպատակները և առաջադրանքներն իրականացնելու ուղղությամբ:²⁹ IEP-ի հանդիպման ժամանակ ծնողները պետք է պատրաստ լինեն համոզելու IEP-ի թիմին, որ իրենց երեխան ունի ՎԿՎ թերապիայի կարիքը՝ հատուկ կրթությունից օգուտ ստանալու համար: [Այցելեք](#)՝ իմանալու մանրամասն տեղեկություններ գնահատման և IEP-ի կազմման գործընթացի, ինչպես նաև այն մասին, թե ով պետք է ներկա գտնվի IEP-ի հանդիպմանը, և ինչ կարող եք անել, եթե համաձայն չեք դպրոցական կրթության շրջանային բաժնի գնահատումների և IEP-ի թիմի որոշումների հետ:

Իմ երեխայի IEP-ը կարո՞ղ է արդյոք հետաձգվել

Ոչ: IEP-ը կազմելուց հետո հատուկ կրթությունը և հարակից ծառայությունները պետք է տրամադրվեն երեխային IEP-ի համաձայն: Կրթության տեղական գործակալությունը պետք է ապահովի, որ աշակերտի IEP-ի իրականացումը, այդ թվում՝ հատուկ կրթության և

հարակից ծառայությունների դիմաց վճարման հարցի հետ կապված ցանկացած գործի կատարումը չուշացվի:³⁰

ՎԿՎ թերապիայի համար վճարում է դպրոցական կրթության շրջանային բաժինը, թե՞ իմ ապահովագրությունը

Ձեր երեխայի IEP-ում նշված ՎԿՎ թերապիան չի նշանակում, որ ապահովագրական պլանը կամ որևէ երրորդ կողմ այլևս չպետք է մատուցի այդ ծառայությունները հաշմանդամություն ունեցող երեխային կամ վճարի այդ ծառայությունների դիմաց:³¹ Medi-Cal-ը և մասնավոր ապահովագրական ընկերությունները իրավունակ երեխաներին պետք է տրամադրեն ՎԿՎ թերապիայի ծառայություններ: Եթե երեխան ստանում է թերապիան կրթական հաստատությունում կամ կրթական նպատակով, այդ հանգամանքը չի ազատում ապահովագրողին կրթական հաստատությունից դուրս անհրաժեշտ ծառայությունների համար վճարելու պարտավորությունից:³²

Կարո՞ղ է դպրոցական կրթության շրջանային բաժինը պահանջել ինձնից ծառայությունների վճարման համար օգտագործել Medi-Cal-ի կամ այլ մասնավոր ապահովագրության պլանը

Դպրոցական կրթության շրջանային բաժինը կարող է խնդրել ձեր համաձայնությունը ձեր աշակերտի հարակից ծառայությունների վճարման համար օգտագործել Medi-Cal-ի ապահովագրական պլանը, սակայն դուք պարտավոր չեք տալ համաձայնություն: Հանրային դպրոցի շրջանային բաժինը ծառայությունները մատուցելու կամ դրանց դիմաց վճարման համար կարող է օգտագործել երեխայի Medi-Cal-ը կամ այլ մասնավոր ապահովագրական պլանը, եթե թույլատրվում է ապահովագրական ծրագրով:

Սակայն եթե ՎԿՎ թերապիայի նպատակը իրավունակ երեխային FAPE տրամադրելն է, դպրոցական կրթության շրջանային բաժինը չի կարող պահանջել ծնողներից գրանցվել կամ անդամագրվել Medi-Cal-ին ծառայության վճարի փոխհատուցման համար:³³ Դպրոցական կրթության շրջանային բաժինը չի կարող պահանջել ծնողներից ծառայությունների համար վճարել սեփական միջոցներով, օրինակ, ապահովագրության չփոխհատուցվող գումարի կամ համավճարի տեսքով: Եթե ծառայությունների պահանջի դեպքում վճարումն իրականացվի չփոխհատուցվող գումարի վճարման կամ համավճարի

տեսքով, դպրոցական կրթության շրջանային բաժինը գուցե վճարի այն ծախսի համար, որը ծնողն այլապես պետք է վճարեր:³⁴

Եվ դպրոցական կրթության շրջանային բաժինը չի կարող օգտագործել երեխային Medi-Cal-ով հատկացվող նպաստները, եթե դրա օգտագործումը.

- Կնվազեցնի կյանքի ընթացքում հասանելի ծածկույթը կամ այլ ապահովագրված նպաստը
- Կհանգեցնի նրան, որ ընտանիքը կվճարի այն ծառայությունների համար, որոնք այլ հանգամանքներում ենթակա են փոխհատուցման պետական նպաստներով կամ ապահովագրական ծրագրով, և որոնց կարիքը երեխան ունի դպրոցից դուրս
- Կմեծացնի ապահովագրավճարների չափը կամ կհանգեցնի նպաստների կամ ապահովագրության դադարեցմանը կամ
- Կստեղծի տանը և համայնքում ծառայությունների ստացման իրավունակության կորստի վտանգ՝ պայմանավորված առողջությանն առնչվող ընդհանուր ծախսերով:³⁵

Դպրոցական կրթության շրջանային բաժինը, նախքան երեխայի կամ ծնողի պետական նպաստները կամ ապահովագրությունն օգտագործելը, պետք է ստանա ծնողների գրավոր համաձայնությունը:³⁶ Եթե ծնողը համաձայն չէ, որ իր պետական նպաստները կամ ապահովագրությունն օգտագործվեն, քանի որ դրանք կարող են ծառայությունների համար ծախս առաջացնել, դպրոցական կրթության շրջանային բաժինը FAPE-ն ապահովելու նպատակով ծառայությունների վճարման համար կարող է օգտագործել հատուկ կրթության համար նախատեսված միջոցները:³⁷

Ի՞նչ է տեղի ունենում, եթե ինձ պետական նպաստներ կամ առողջության պետական ապահովագրություն տրամադրող կազմակերպությունները հրաժարվում են վճարել ՎԿՎ թերապիայի համար

Եթե որևէ պետական մարմին, որը դպրոցական կրթության շրջանային բաժինը չէ, չի տրամադրում հատուկ կրթությունը և հարակից ծառայությունները կամ չի վճարում դրանց համար, ապա կրթության տեղական գործակալությունը պետք է ժամանակին տրամադրի ծառայությունները կամ վճարի դրանց դիմաց:³⁸ Կրթության տեղական

գործակալությունը սովորաբար դպրոցական կրթության այն շրջանային բաժինն է, որը պատասխանատու է աշակերտի IEP-ի կազմման համար: ՎԿՎ թերապիայի ծախսերի համար նախատեսված ապահովագրական ծածկույթի մասին լրացուցիչ տեղեկությունները տե՛ս վերևում:

Դպրոցական կրթության շրջանային բաժինը կարո՞ղ է օգտագործել իմ մասնավոր ապահովագրությունը ՎԿՎ թերապիայի վճարման նպատակով

Այո, եթե տաք ձեր համաձայնությունը, և ձեր մասնավոր ապահովագրության ընկերությունը վճարի ծառայությունների համար: Երբ ծառայություններն իրավունակ երեխայի համար ապահովում են FAPE, պետական գործակալությունը կարող է օգտագործել ձնողի մասնավոր ապահովագրության փոխհատուցումը միայն ձնողի համաձայնությամբ: Ամեն անգամ, երբ դպրոցական կրթության շրջանային բաժինն առաջարկի օգտագործել ձնողի մասնավոր ապահովագրության փոխհատուցումը, ձնողը պետք է տա իր համաձայնությունը: Եթե ձնողը հրաժարվի թույլ տալ դպրոցական կրթության շրջանային բաժինն օգտագործել իր մասնավոր ապահովագրությունը, դա չի ազատի վերջինիս բոլոր պահանջվող ծառայությունները ձնողներին անվճար տրամադրելու պատասխանատվությունից:³⁹

Մասնավոր ապահովագրության ընկերությունները ծառայությունների համար երբեմն պահանջում են չհատուցվող գումար կամ համավճար: Այսպիսի դեպքերում դպրոցական կրթության շրջանային բաժինը հնարավոր է վճարի այն գումարը, որը ձնողից պահանջվելու էր վճարել:⁴⁰ Այսպես դպրոցական կրթության շրջանային բաժինը կարող է օգտագործել մասնավոր ապահովագրությունը, և ձնողը որևէ վճար չի վճարի: Ծնողն ամեն դեպքում պետք է դպրոցական կրթության շրջանային բաժինն տա համաձայնություն մասնավոր ապահովագրության կամ նպաստների օգտագործման համար: Եթե ձնողը իր մասնավոր ապահովագրության օգտագործման համար համաձայնություն չտա, քանի որ դա ծառայությունների համար ծախս կառաջացնի, դպրոցական կրթության շրջանային բաժինը FAPE-ն ապահովելու նպատակով ծառայությունների վճարման համար կարող է օգտագործել հատուկ կրթության համար նախատեսված իր միջոցները:⁴¹

ՎԿՎ թերապիայի ստացումը տարածքային կենտրոնի միջոցով

Որպես կանոն առողջության ապահովագրության պլանները և դպրոցական կրթության շրջանային բաժինները տրամադրում են ՎԿՎ թերապիայի ծառայությունները և ֆինանսավորումը: Երբեմն ՎԿՎ թերապիայի ծառայությունները տրամադրում և ֆինանսավորում են նաև տարածքային կենտրոնները: Տարածքային կենտրոնները ՎԿՎ թերապիայի ծառայությունները և դրանց ֆինանսավորումը կարող են տրամադրել երկու ծրագրով. «Վաղ սկիզբ» ծրագրով և Լանթերմանի օրենքով: Այս բաժնում համառոտ ներկայացվում են Կալիֆորնիայի տարածքային կենտրոնները, «Վաղ սկիզբ» ծրագիրը, Լանթերմանի օրենքը և տեղեկատվություն ՎԿՎ թերապիայի համար տարածքային կենտրոնների ֆինանսավորման տրամադրման վերաբերյալ: Տարածքային կենտրոնները կարող են առողջության ապահովագրության պլաններին նաև լրացուցիչ փաստաթղթեր տրամադրել բժշկական անհրաժեշտության վերաբերյալ: Նույնիսկ եթե չէք պլանավորում ՎԿՎ թերապիայի ծառայություններն ստանալ տարածքային կենտրոնի միջոցով, արժե նրանց հետ քննարկել տարբերակները:

Տեղեկություններ Կալիֆորնիայի տարածքային կենտրոնների մասին

Կալիֆորնիայի տարածքային կենտրոնները համակարգում են ծառայությունների մատուցումը զարգացման խանգարումներով երեխաներին և մեծահասակներին: Կալիֆորնիայում գործում է 21 ոչ առևտրային տարածքային կենտրոն: Տարածքային կենտրոնները ենթարկվում են Չարգացման խանգարումներով անձանց սոցիալական ապահովության դեպարտամենտին (Department of Developmental Services, DDS) և պետք է ղեկավարվեն օրենսդրության 17-րդ տիտղոսով և Լանթերմանի օրենքով: 17-րդ տիտղոսով ղեկավարվում է Կալիֆորնիայի «Վաղ սկիզբ» ծրագիրը՝ նախատեսված 0-ից 36 ամսական նորածինների և մանուկների համար:⁴² Լանթերմանի օրենքով ղեկավարվում են տարածքային կենտրոնների կողմից 3 տարեկանից բարձր տարիքի անձանց մատուցվող ծառայությունները: Տարածքային կենտրոնները գնահատում են մարդկանց կարիքները և սահմանում են ծառայությունների, այդ թվում՝ ՎԿՎ թերապիայի համար նրանց իրավունակությունը:

Ի՞նչ է «Վաղ սկիզբ» ծրագիրը (0-ից 36 ամսականների համար)

Տարածքային կենտրոնների «Վաղ սկիզբ» ծրագրով տրամադրվում են ծառայություններ 0-ից 36 ամսական երեխաներին: «Վաղ սկիզբ» ծրագիրը մշակվել է ի պատասխան Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ապահովման մասին օրենքի (Individuals with Disabilities Education Act, IDEA) Մաս C-ի⁴³ և ապահովում է միջամտության ծառայություններ իրավունակ նորածինների և մանուկների համար: Ծառայությունների այս համակարգը կիրառում է համակարգված և ընտանիքին ուղղված մոտեցում վաղ միջամտությանը:⁴⁴ Տարածքային կենտրոնների փաստաթղթավորված վերլուծությամբ և գնահատմամբ որոշվում է նորածնի կամ մանուկի իրավունակությունը «Վաղ սկիզբ» ծրագրի միջոցով իրականացվող վաղ միջամտության համար

0-ից 36 ամսական նորածիններն ու մանուկները կարող են իրավունակ լինել «Վաղ սկիզբ» ծրագրի համար, եթե բավարարում են այս պայմաններից մեկին.

- Ունեն առնվազն 33% զարգացման հապաղում ճանաչողական, հաղորդակցման, սոցիալական կամ զգայական, ադապտիվ կամ ֆիզիկական և մոտորիկայի, այդ թվում՝ տեսողության և լսողության զարգացման մեկ կամ մի քանի ոլորտներում,
- Ունեն հիվանդության հայտնի պատճառ, որը մեծ հավանականությամբ հանգեցնելու է զարգացման հապաղման
- Ռիսկի կենսաբժշկական գործոնների համակցման հետևանքով համարվում են զարգացման լուրջ խանգարում ունենալու բարձր ռիսկի տակ, որի համար ախտորոշվել են որակավորված անձնակազմի կողմից:⁴⁵

Վաղ միջամտության ծառայությունները տարբեր են: Դրանց համապատասխանելու համար անհրաժեշտ է, որ Ընտանիքին մատուցվող ծառայության անհատականացված պլանը (Individualized Family Service Plan, IFSP) կազմող թիմին ներկայացվեն անձի զարգացման կարիքների գնահատումը և ընտանիքի առաջնահերթություններն ու մտահոգությունները: Վաղ միջամտության ծառայությունները կարող են ներառել ՎԿՎ թերապիան: Մանկան IFSP-

ում կարող են սահմանվել նրա անհատական կարիքները բավարարող ծառայություններ՝ ներառյալ ՎԿՎ թերապիան:

Եթե կարծում եք, որ ՎԿՎ թերապիան կարող է օգնել ձեր փոքր տարիքի երեխային, կապվեք ձեր տարածքային կենտրոնի կամ դպրոցական կրթության շրջանային բաժնի հետ: Տարածքային կենտրոնը կամ դպրոցական կրթության շրջանային բաժինը կնշանակեն ծառայությունների համակարգող: Ծառայությունների համակարգողը կօգնի ձեզ՝ որոշելով ՎԿՎ թերապիայի ծառայությունների իրավունակությունը և համակարգելով դրանց մատուցումը:⁴⁶

Իմ երեխան 3 տարեկանից փոքր է, դրսևորում է աուտիզմին բնորոշ վարքագիծ, բայց չի ախտորոշվել: Նա կարո՞ղ է ստանալ ՎԿՎ թերապիա տարածքային կենտրոնից

Եթե ձեր երեխան չունի աուտիզմի ախտորոշում, կարող է «Վաղ սկիզբ» ծրագրի միջոցով ստանալ ՎԿՎ թերապիայի ծառայություններ տարածքային կենտրոնից այն դեպքում, եթե բավարարի իրավունակության չափանիշները:⁴⁷

Ի՞նչ է Լանթերմանի օրենքը (3 և ավելի տարեկան)

Լանթերմանի օրենքը Կալիֆորնիայի օրենք է, որով պահանջվում է, որ տարածքային կենտրոնները ծառայություններ մատուցեն 3 և ավելի տարեկան մարդկանց: Օրենքն ապահովում է, որ զարգացման խանգարումներով անձինք ստանան այն ծառայություններն ու աջակցությունը, որոնք անհրաժեշտ են նրանց՝ հաշմանդամություն չունեցող մարդկանց նման համայնքային կյանքում ինտեգրվելու և առօրյա կյանքով ապրելու համար:⁴⁸

Լանթերմանի օրենքով սահմանված տարածքային կենտրոնի ծառայությունների իրավունակության համար անձը պետք է ունենա հաշմանդամություն, որը.

- ի հայտ է եկել մինչև 18 տարեկանը,
- ակնկալվում է, որ կշարունակվի անորոշ ժամանակով և
- իրենից ներկայացնում է ծանր հաշմանդամություն:

Չամապատասխանելու համար անձը պետք է ունենա հետևյալ հիվանդությունները՝ ուղեղային կաթված, Էպիլեպսիա, աուտիզմ,

դառնի համախտանիշ, մտավոր հետամնացություն և մտավոր հետամնացության նման կամ նմանատիպ բուժում պահանջող այլ հիվանդություններ:⁴⁹ Լանթերմանի օրենքում ասվում է, որ տարածքային կենտրոնները պետք է կատարեն վերլուծություն, գնահատում և համակարգեն ծառայությունները: Նրանք նաև պետք է մշակեն Անհատական ծրագրի պլանը (Individual Program Plan, IPP): IPP-ն կարող է ցույց տալ, որ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է ՎԿՎ թերապիա կամ վարքագծային առողջության հետ կապված այլ բուժում: Երեխայի դպրոցական կրթության շրջանային բաժինը կամ տարածքային կենտրոնը անհրաժեշտ ծառայությունների համակարգման և կրթության հարցում աջակցության տրամադրման պատասխանատվությունը ստանձնում են երեխայի 3 տարեկան դառնալուն պես: Եթե երեխան 3 և ավելի տարեկան է, կապվեք դպրոցական կրթության տեղական շրջանային բաժնի և (կամ) տարածքային կենտրոնի հետ նրա գնահատումը կազմակերպելու համար:

Արդյո՞ք տարածքային կենտրոնը տրամադրում է ՎԿՎ թերապիայի ծառայություններ, և որքան արժեն այդ ծառայությունները

Տարածքային կենտրոնները իրավունակ անձանց համար անվճար իրականացնում են վերլուծություն, գնահատում և ծառայության համակարգում: Սակայն տարածքային կենտրոնները տարածքային կենտրոնի ծառայություններն ստացող շահառուների համար պարտավոր են սահմանել և գտնել ֆինանսավորման բոլոր աղբյուրները:⁵⁰ Պետական կամ մասնավոր ապահովագրությունը պետք է օգտագործվի նախ բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ծառայությունների, օրինակ, ՎԿՎ թերապիայի համար: Կալիֆորնիայում իրավունակ երեխաների համար ՎԿՎ թերապիայի ծառայությունների համար պետք է վճարեն Medi-Cal-ը, մասնավոր ապահովագրություններից շատերը և դպրոցական կրթության շրջանային բաժինները: Եթե ծառայությունը ապահովագրական ծածկույթի մեջ չի մտնում, ապա ծառայությունը գնում և տրամադրում են Կրթության տեղական գործակալությունները (դպրոցական կրթության շրջանային բաժինները) կամ տարածքային կենտրոնները:⁵¹

Եթե Medi-Cal-ը կամ մասնավոր ապահովագրությունը մերժում են ՎԿՎ թերապիայի ձեր դիմումը, ծախսերը կարող է ստանձնել տարածքային կենտրոնը: Տարածքային կենտրոնը կստանձնի ծախսը այն անձանց համար, որոնք իրավունակ են տարածքային կենտրոնի

ծառայությունների համար: Տարածքային կենտրոնը առանց մասնավոր ապահովագրության և (կամ) Medi-Cal-ի մերժման կրկնօրինակ ստանալու չի կարող ֆինանսավորել ՎԿՎ թերապիան 3 և ավելի տարեկան շահառուի համար: Տարածքային կենտրոնը պետք է նաև սահմանի, որ մերժման բողոքարկումը հաջողություն չի ունենա: ⁵² Մասնավոր ապահովագրությունից և (կամ) Medi-Cal-ից մերժում ստանալու դեպքում կապվեք ձեր տարածքային կենտրոնի հետ, որպեսզի որոշեք, թե արդյոք բողոքարկումը կարող է հաջողություն ունենալ: Եթե դեռևս չունեք տարածքային կենտրոնի ծառայություններից օգտվելու իրավունակություն, պետք է դիմեք իրավունակություն ստանալու համար:

Տարածքային կենտրոնը միգուցե ֆինանսավորի ՎԿՎ թերապիան, եթե անձը ունի ինքնուրույն ֆինանսավորած/ինքնուրույն ձեռք բերած առողջության մասնավոր ապահովագրական պլան: Տարածքային կենտրոնը գուցե նաև ֆինանսավորի ՎԿՎ թերապիան առողջության ապահովագրության այն պլանների համար, որոնք գնվել են Կալիֆորնիայից դուրս: Տարածքային կենտրոնները չեն գնի ծառայությունը, որն այլ կերպ հնարավոր է ստանալ Medi-Cal-ից, Medicare-ից կամ մասնավոր ապահովագրությունից, եթե շահառուն կամ ընտանիքը բավարարում է ծածկույթից օգտվելու պայմանները, սակայն նախընտրում է չգնել այն:

Կարո՞ղ է տարածքային կենտրոնը վճարել իմ համավճարները, համատեղ ապահովագրությունը և (կամ) չհատուցվող գումարները

Այո: Տարածքային կենտրոնները գուցե վճարեն համավճարները և չհատուցվող գումարները, եթե ընտանիքի եկամուտը ցածր է դաշնային սպառողական զամբյուղի 400%-ից: ⁵³ Համավճարների ֆինանսավորման համար դիմեք ձեր տարածքային կենտրոնի ծառայության համակարգողին:

Ես չունեմ մերժում մասնավոր ապահովագրությունից կամ Medi-Cal-ից: Ակնկալիքներ կա՞ն

Այո: Տարածքային կենտրոնները հնարավոր է վճարեն վարքի շտկման ծառայությունների համար հետևյալ ժամանակաշրջաններում.

- Քանի դեռ կուտակում եք ծածկույթը, բայց դեռ մերժում չեք ստացել:

- Երբ սպասում եք բողոքարկման վերջնական վարչական որոշմանը, եթե տարածքային կենտրոնին ներկայացնեք ձեր բողոքարկման ապացույցը:
- Մինչև Medi-Cal-ի, մասնավոր ապահովագրության կամ առողջապահության ապահովագրական պլանով սկսվի ՎԿՎ թերապիայի ծառայությունների մատուցումը:⁵⁴

Կալիֆորնիայի տարածքային կենտրոնների կոնտակտային տվյալներ.

Ձեր տարածքային կենտրոնը գտնելու և նրա հետ կապ հաստատելու համար անցեք Կալիֆորնիայի Չարգացման խանգարումներով անձանց սոցիալական ապահովության ծառայությունների դեպարտամենտի կողմից վարվող հետևյալ հղումով՝ <https://www.dds.ca.gov/rc/listings/>:

Ընդհանուր խորհուրդներ.

- Եթե ձեզ մերժել են ստանալ ՎԿՎ թերապիան ձեր առողջության ապահովագրական պլանի միջոցով, ինդրեք գրավոր ներկայացնել պատճառը:
- Ունեցեք ձեր երեխայի մանկաբույժից, դպրոցական կրթության շրջանային բաժնից կամ տարածքային կենտրոնից ստացած բոլոր գնահատումների, բուժման պլանների, նպատակների և նամակների պատճենները, որոնք կօգնեն հաստատել ՎԿՎ թերապիայի բժշկական տեսանկյունից անհրաժեշտ լինելը:
- Կատարեք նշումներ: Գրի առեք ձեր զանգի ամսաթիվը, այն անձի անունը, որի հետ խոսել եք և այն ամենը, ինչ ասել է տվյալ անձը:
- Բոլոր օգնող փաստաթղթերը պահեք այս թեմայի համար ստեղծված թղթապանակում:

¹ Health & Safety Code Section 1374.73(c)(3)

² https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Documents/BHT_FAQ_12-18-18.pdf:

³ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Documents/Medi-Cal-Coverage-for-EPSDT.pdf>

⁴ Նույնը

⁵ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/BehavioralHealthTreatment.aspx>. : Վարքագծի շտկման ուղղությամբ տարվող բուժումը ծառայությունների լայն կատեգորիա է: Այն ներառում է ՎԿՎ թերապիան և վարքի՝ փաստերի վրա հիմնված միջամիտության այլ մեթոդներ:

⁶ Նույնը

⁷ Նույնը

⁸ Նույնը

⁹ <https://www.dhcs.ca.gov/services/medi-cal/Pages/BehavioralHealthTreatment.aspx>:

¹⁰ <https://www.dhcs.ca.gov/formsandpubs/Documents/MMCDAPLsandPolicyLetters/APL2018/APL18-006.pdf>:

¹¹ Նույնը

¹² Նույնը

¹³ Նույնը

¹⁴ Նույնը

¹⁵ <https://www.law.cornell.edu/uscode/text/42/18022>, <https://www.law.cornell.edu/cfr/text/45/156.20>: Առողջության ապահովման այս պարտադիր նպաստները ներառում են հոգեբուժական օգնության կամ հոգեներգործունե սյուրթերի օգտագործումից առաջացող խանգարումների բուժման ծառայությունները և վերականգնողական և ադապտացման ծառայությունները:

¹⁶ <https://www.govinfo.gov/content/pkg/FR-2015-02-27/pdf/2015-03751.pdf>: HHS-ի սահմանմամբ ադապտացման ծառայությունները այն ծառայություններն են, որոնք մատուցվում են անձին՝ հաշմանդամություն առաջացնող խնդրի հետևանքով երբեք չսովորած կամ ձեռք չբերած հմտությունը կամ ֆունկցիան ձեռք բերելու, պահպանելու կամ մասնակի վատթարացման համար: Օրինակ՝ համապատասխան տարիքում չքայլող կամ չխոսող երեխայի բուժումը: Այս ծառայությունները կարող են լինել ֆիզիկական և մասնագիտական հիվանդությունների բուժումը, խոսքային խնդիրների շտկման թերապիան և այլ ծառայությունների մատուցումը հաշմանդամություն ունեցող մարդկանց համար ստացիոնար կամ ամբուլատոր տարբեր միջավայրերում:

¹⁷ http://leginfo.ca.gov/pub/11-12/bill/sen/sb_0901-0950/sb_946_bill_20111009_chaptered.pdf

¹⁸ <http://www.insurance.ca.gov/01-consumers/110-health/60-resources/05-autism/upload/REVAutismFAQs.pdf>:

¹⁹ Ապահովագրության մասին օրենքի բաժիններ 10169 և 10123.13:

²⁰ Որոշ իրավիճակներում բողոքարկման գործընթացը կարող է արագացվել: Եթե տվյալ անձի կյանքը կամ առողջությունը երկարաժամկետ հեռանկարում վտանգի տակ են: Ձեր ապահովագրական ընկերության անդամների սպասարկման կենտրոնից պարզեք, թե արդյոք դա կիրառելի է ձեզ համար:

²¹ <https://www.insurance.ca.gov/01-consumers/110-health/60-resources/05-autism/upload/REVAutismFAQs.pdf>:

²² 34 C.F.R. Sec. 300.17 Free Appropriate Public Education
<https://sites.ed.gov/idea/regsb/a/300.17>:

²³ 20 U.S.C. Sec. 1401(29); 34 C.F.R. Sec. 300.39; Cal. Ed. Code Sec. 56031:

²⁴ Title 20 United States Code (U.S.C.) Section (Sec.) 1401(9); Title 34, Code of Federal Regulations (C.F.R.) Sec. 300.17:

²⁵ <https://serr.disabilityrightsca.org/serr-manual/chapter-4-information-on-iep-process/4-1-what-is-an-individualized-education-program-iep-and-how-do-i-request-one-for-my-child/>:

²⁶ <https://serr.disabilityrightsca.org/serr-manual/chapter-4-information-on-iep-process/4-1-what-is-an-individualized-education-program-iep-and-how-do-i-request-one-for-my-child/>:

²⁷ 34 C.F.R. Sec. 300.320; Cal. Ed. Code Sec. 56344 (a): Հինգ օրից երկար տևող դպրոցական արձակուրդները չեն հաշվվում 60-օրյա ժամկետում: Օրինակ, եթե աշակերտի հատուկ կրթության ուղեգիրը տրվել է կանոնավոր ուսումնական տարվա ավարտից 30 օր առաջ կամ ավելի վաղ, IEP-ը պետք է կազմվի հաջորդ ուսումնական տարին սկսելուց հետո 30 օրվա ընթացքում:

²⁸ 34 C.F.R. Sec. 300.34(a):

²⁹ County of San Diego v. California Special Education Hearing Office, 93 F.3d 1458, 1467 (9th Cir. 1996):

³⁰ 34 C.F.R. Sec. 300.103 FAPE:

³¹ 34 C.F.R. Sec. 300.103(b) <https://sites.ed.gov/idea/regsb/b/300.103>:

³² 34 C.F.R. Sec. 300.154 (b)(1)(i):

<https://sites.ed.gov/idea/regs/b/b/300.154:>

³³ 34 C.F.R. Sec. 300.154 (d)(2)(i):

³⁴ 34 C.F.R. Sec. 300.154 (d)(2)(ii):

³⁵ 34 C.F.R. Sec. 300.154 (d)(2)(iii):

³⁶ 34 C.F.R. Sec. 300.154 (d)(2)(iv) և (v):

³⁷ 34 C.F.R. Sec. 300.154 (f)(1):

³⁸ 34 C.F.R. Sec. 300.154 (B)(2): Կրթության տեղական գործակալությունը կարող է ծառայությունների համար փոխհատուցում պահանջել ծառայությունները չտրամադրած կամ դրանց դիմաց չվճարած ոչ կրթական պետական գործակալությունից:

³⁹ 34 C.F.R. Sec. 300.154(e): Տե՛ս նաև (f):

⁴⁰ 34 C.F.R. Sec. 300.154 (f)(2):

⁴¹ 34 C.F.R. Sec. 300.154 (f)(1):

⁴² Սկսած 17 C.C.R. § 52000-ից 52175:

⁴³ https://www.ecfr.gov/cgi-bin/text-idx?tpl=/ecfrbrowse/Title34/34cfr303_main_02.tpl:

⁴⁴ IDEA; 20; U.S.C., Section 1431 et seq.

⁴⁵ California Government Code: Section 95014(a): California Code of Regulations: Title 17, Chapter 2, Section 52022

⁴⁶ 17 C.C.R. § 52120:

⁴⁷ 17 C.C.R. § 52022:

⁴⁸ https://www.dds.ca.gov/wp-content/uploads/2019/02/LA_Guide-1.pdf:

⁴⁹

http://leginfo.legislature.ca.gov/faces/codes_displaySection.xhtml?lawCode=WIC§ionNum=4512 (հաշմանդամություն առաջացնող այլ հիվանդությունների սահմանում):

⁵⁰ W.I.C. 4659(a):

⁵¹ 34 C.F.R. Sec. 300.154 (B)(2): Կրթության տեղական գործակալությունը կարող է ծառայությունների համար փոխհատուցում պահանջել ծառայությունները չտրամադրած կամ դրանց դիմաց չվճարած ոչ կրթական պետական գործակալությունից:

⁵² https://www.altaregional.org/sites/main/files/file_attachments/a_family_guide_to_childrens_services.final1_word_doc.pdf (W&I Code 4648, 4659, 4685-4689.8):

⁵³ W.I.C. 4659.1 Sec 7:

⁵⁴ W.I.C. Sec. 4659: